

2012

ГЕРМАНСКИЙ Фонд
МЕЖДУНАРОДНОГО ПРАВОВОГО
СОТРУДНИЧЕСТВА



ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՆՉԱՓԱՅԱՆԵՐԻ ՊՐԲԱՅԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԵՐԱՔԵՐՅԱԼ



«Սոցիալական արդարություն»
Հասարակական կազմակերպություն

Ճանուցում

Սույն թվականի Սեպտեմբերի 27-28-ը կայացավ աշխատանքային հանդիպում-քննարկում պրոբացիայի ծառայության փորձագետ Պիտեր Վերի (Գերմանիա) հետ:

Հանդիպումը կազմակերպվել էր «Սոցիալական արդարության» հասարակական կազմակերպության և «Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ»ի (IRZ) աջակցությամբ ու համագործակցությամբ:

Սույն ուղեցույցի նպատակն է Արդարադատության նախարարությանը տրամադրել գործնական տեղեկատվություն Գերմանիայի Դաշնության նույն պրոբացիայի ծառայության կազմակերպման վերաբերյալ:

Կազմակերպությանը շնորհակալություն է հայտնում «Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ»ին (IRZ) ծրագրի աջակցության համար, մասնավորապես՝

ԹերեզաԹալ համմեր – տարածաշրջանային ծրագրերի ղեկավար

Նելլի Թումայան – Հայաստանի գրասենյակի համակարգող

Պիտեր Վեր – Փորձագետ (Գերմանիա)

Աշխատանքային խմբի մասնակիցներ

Արշակ Գասպարյան – աշխատանքային խմբի ղեկավար

Հայկ Իեմչյան – Միջազգային Բանտային Բարեփոխումներ, Հայաստանյան գրասենյակի համակարգող

Մարիամ Մարտիրոսյան – Փի-Էյչ Ինթերնեշնլ, Հայաստանի գրասենյակի տնօրեն

Գայանե Հովակիմյան – ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն, գլխավոր մասնագետ

Լուսյա Գալուկչյան – ՀՀ ԱՆ «Աբովյան» Քրեակատարողական հիմնարկ, գլխավոր մասնագետ

Իննա Երանոսյան – ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, Մարդու իրավունքի հարցերով ավագ օգնական

Հուսով ենք, նշված ուղեցույցը պիտանի կլինի Հայաստանի Հանրապետության նույն պրոբացիայի պետական ծառայության ներդրման, հայեցակարգի և հետագա ազդեցության մշակման աշխատանքներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ		Է Զ
1.	Ընդհանուր տեղեկություններ	4
2.	Լոկալ իրավական կարգավորումներ	4
3.	Կառուցվածք և ենթակայություն	5
4.	Անձնակազմ	6
5.	Գործառույթներ	7
5.1,	Մինչ դատական և դատական գեկույցներ	7
5.2.	Այլ ընտրանքային պատիժների կատարում և վերահսկողություն	8
5.3.	Պայմանական վաղաժամկետ ազատում	8
5.4.	Մեղիացիա	9
5.5.	Վերականգնողական ծրագրեր	10

Ընդհանուր տեղեկություններ

Գերմանիայում պրոբացիան ստեղծվել է 1949թ.:

Սկզբում գործելով հասարակական հիմունքներով, այն իրականացնում էր հիմնականում սոցիալական աջակցության ծրագրեր ու գործառույթներ: Ավելի ուշ փուլում այս ծառայողները վերածվեցին պրոբացիայի պետական (հանրային) ծառայողների:

Անչափահասների քրեական պատասխանատվության տարիքը 14-ն է, սակայն ամբաստանյալներն անչափահասներին հատուկ դատավարական գործընթացներով են անցնում նաև մինչև 21 տարեկան երիտասարդները:

Իրավական կարգավորում

Գերմանիայում գործում է առանձին Դաշնային օրենք, որը կարգավորում է պրոբացիայի ծառայությունը: Գործում է նաև անչափահասների արդարադատության մասին օրենք: Այս օրենսդրական ակտով է կարգավորվում անչափահասների հանցագործության կանխումը և ուղղումը՝ առանց նրանց պատժելու:

Գերմանիայի Դաշնությունում Պրոբացիոն ծառայությունը ստանձնել է իրավախախտների ռեսոցիալիզացիայի պատասխանատվություն: Ընդհանուր առմամբ Գերմանիայի Դաշնությունում այս ծառայությունները ճանաչված են որպես «Սոցիալական ծառայություններ քրեական արդարադատության համակարգում»:

Ընդհանուր առմամբ Գերմանիայում քրեական արդարադատությունը անչափահասների նկատմամբ կրում է յուրահատուկ բնույթ, և որպես կանոն անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակը կիրառվում է միայն խիստ ծայրահեղ դեպքերում, երբ նա ունի կայուն հանցածին վնասակար հակումներ:

Ավելին, որպես կանոն, առաջին անգամ հանցագործությունն կատարած անչափահասը չի ազատազրկվում, և նրա նկատմամբ կիրառվում է ռեսոցիալիզացիայի, վերականգնման ու հասարակությունում վերափնտեգրման բազմաթիվ ծրագրեր (այդ ծրագրերի մասին կխոսվի հաջորդիվ):

Այս առումով, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի իրավական ակտով կկարգավորվեն պրոբացիոն աշխատանքները ՀՀ-ում (առանձին իրավական ակտ կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ), ցանկալի է, որպեսզի համապատասխան փոփոխություններ կատարվեն նաև ՀՀ քրեական օրենսգրքում և անչափահասների նկատմամբ պատժի քաղաքականությունը վերանայվի:

Ցանկալի է, որպեսզի անչափահասների նկատմամբ պրոբացիոն աշխատանքները կրեն պարտադիր բնույթ, և անչափահասը

քրեակատարողական հիմնարկում հայտնվի խիստ անհրաժեշտ ու
հիմնավորված դեպքերում:

Կառուցվածք և ենթակայ ությ ու ն

Ընդհանրապես Գերմանիայի Դաշնության պրոբացիայի ծառայության կառավարումը խիստ ապակենտրոնացված է: Պրոբացիոն ծառայությունը Գերմանիայում, ի տարբերություն եվրոպական այլ պետությունների, ունի երկու ենթակայ ությ ու ն՝ վարչական և մասնագիտական: Մասնագիտական առումով ենթակա են դատավորին, վարչական մասով՝ պրոբացիոն ծառայությանը, որը գործում է արդարադատության նախարարության ենթակայ ությ ու ն: Պրոբացիոն սպան իր գործունեության մասնագիտական մասի համար հաշվետու է գործն իրեն մակագրած դատավորին, իսկ վարչական մասով նա հաշվետու է Պրոբացիոն գործակալ ությ ու ն: Պրոբացիոն ծառայողը երեք ամիսը մեկ անգամ դատարանի նախագահին է ներկայացնում տեղեկատվություն իր ծանրաբեռնված ությ ու ն վերաբերյալ, որպեսզի վերջինս կարողանա ճիշտ համակարգել գործերի բաշխումը:

Պրոբացիոն ծառայությունները (գրասենյակները) գործում են ըստ առաջին ատյանի դատարանի տեղակայման: Սակայն պրոբացիոն ծառայությունը չունի նստավայր հենց դատարանի ներսում և տեղակայված է այլ գրասենյակում:

Յուրաքանչյուր առաջին ատյանի դատարան իր տրամադրության տակ ունի իր տարածքի պրոբացիոն ծառայությունը: Պրոբացիոն ծառայողին պաշտոնի նշանակում, նրան արձակուրդ է տրամադրում, ապահովում է ռեսուրսներով տվյալ երկրամասյին դատարանի նախագահը:

Վարչական առումով, Պրոբացիայի ծառայությունը գործում է արդարադատության նախարարության կազմում՝ քրեակատարողական ծառայությանից անջատ և չունի վերջինիս հետ որևէ ենթակայ ությ ու ն: Կառուցվածքային նման ենթակայ ությ ու ն է նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության «Դատական և իրավական բարեփոխումների 2012-2016 ծրագրում և դրանից բխող միջոցառումների ցանկ»-ում:

Պրոբացիայի ծառայողները պետական քաղաքացիական ծառայողներ են և առաջնորդվում են Էթիկայի ներքին հատուկ կանոնակարգով:

Այս առումով, կարծում ենք, անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի իրավական ակտեր կկանոնակարգեն ապագա պրոբացիայի ծառայությունը Հայաստանի Հանրապետությունում, այնուամենայնիվ անհրաժեշտ է ունենալ հաստատված Էթիկայի կանոններ, որոնց խախտման համար պետք է նախատեսվեն համարժեք կարգապահական պատասխանատվություններ: Այս կանոնակարգի գոյությունը նախատեսվում է նաև ՄԱԿ-ի «Տոկիոյի Կանոններով» և անդամ պետություններին ուղղված Եվրոպայի Նախարարների խորհրդի թիվ 2010/1 հանձնարարականով:

Պետք է նշել, որ Գերմանիայի Դաշնությունում, մասնավորապես՝ Բադեն-Վուրտեմբերգ (Baden-Württemberg)

Երկրամասում գոյություն ունի նաև մասնավոր ընկերությունների կողմից պրոբացիոն գործառնությունների ակնացնելու փորձ: Մասնավորապես, նշված երկրամասում գործում է «Նեոսթարթ» ոչ առևտրային կազմակերպությունը, որն իրականացնում է պրոբացիոն գործառնություններ, այդ թվում դատարաններին աջակցության գեկույցներ, մեդիացիա, տուժողների աջակցություն և այլն: Այս դեպքում ևս, պրոբացիոն գործառնությունների կատարման նկատմամբ վերահսկողությունը պատկանում է Երկրամասի Արդարադատության նախարարությանը (Գերմանիայի Դաշնությունում յուրաքանչյուր երկրամասում կիրառվող կառավարությունը, որոնք ձևավորվում են ընտրություններից հետո):

Պրոբացիոն ծառայության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է պարբերական ուսումնասիրությունների/ստուգումների միջոցով: Մասնավորապես՝ ոչ ավելի, քան երկու տարին մեկ անգամ, յուրաքանչյուր պրոբացիոն ծառայող իրեն հսկող դատավորին է ներկայացնում իր կողմից վարված դեպքերին վերաբերող թղթաբանության ամբողջական փաթեթը:

Անձնակազմ

Որպես կանոն պրոբացիայի ծառայության անձնակազմը կազմված է սոցիալական աշխատողներից և սոցիալական մանկավարժներից: Նշված սոցիալական աշխատողներն իրենց աշխատանքներն իրականացնում են թիմային սկզբունքով: Մասնավորապես՝ մեկ շահառուի (պրոբանտի) հետ աշխատում են մի քանի աշխատակիցներ և խնդրի նկատմամբ ցուցաբերում են համակարգային մոտեցում: Խիստ մասնագիտական կարիքի դեպքում, նշված խմբի ղեկավարը (որը նշանակվում է սոցիալական աշխատողների թիմից՝ տվյալ տարածքի պրոբացիայի գրասենյակի ղեկավարի կողմից) համագործակցում է տվյալ տարածքում գործող ամբուլատոր ծառայության հետ, որն անհրաժեշտության դեպքում աջակցում է աշխատանքներին (օր. պրոբացիոն ծառայության մեջ ընդգրկված անձի պարբերաբար անալիզներ թմրամիջոցների օգտագործման ստուգման համար և այլն):

Ծառայությունը չունի անչափահասներով զբաղվող ամանձին ստորաբաժանում, սակայն կան մասնագետներ, ովքեր առավել հաճախ զբաղվում են հենց անչափահասների գործերով: Նրանցից ոմանք նաև վերապատրաստված են հատուկ թրենինգներ իրականացնելու ուղղությամբ (օր.՝ ագրեսիվության նվազման, սթրեսսի կառավարման, թմրամոլության, սուցիդալ վարքի կանխարգելման թրենինգներ):

Մեկ պրոբացիոն ծառայող աշխատում է առավելագույնը 80 դեպքի հետ՝ ներառյալ չափահասներն ու անչափահասները: Ըստ Պրոբացիոն Եվրոպական Կազմակերպության (CEP) տվյալների՝ 2009

թվականի դրույթը 150,000 դատապարտյալների հետ աշխատում են 2500 պրոբացիոն ծառայողներ: Նրանցից 200-ը կատարում են դատարաններին տեղեկատվության տրամադրման, աջակցման պրոբացիոն գործառնություններ, իսկ 900-ը՝ բանտային համակարգի աջակցման գործառնություններ:

Մեր կարծիքով, ՀՀ ապագա պրոբացիայի ծառայությունը կարող է ունենալ անչափահասներով զբաղվող առանձին կառուցվածքային միավոր (խումբ, բաժանմունք, բաժին), որը կարող է թեթևացնել այլ պրոբացիոն ծառայողների աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Նվազագույնը, անհրաժեշտ է ունենալ հստակ ներդրման ապահովման վերապատաստում անցած աշխատակիցներ, ովքեր իրավասություն կունենան զբաղվել անչափահասների գործերով: Այս առաջարկությունը պետք է դիտարկել նաև Հայաստանի Հանրապետությունում անչափահասների գործերով մասնագիտացման ընդհանուր միտման ենթատեքստում, ինչպես տեղի ունեցավ դատավորների վերապատաստման հարցում: Այս առումով, կարծում ենք, հրատապ է նաև անչափահասների գործեր քննող քննիչների և դատախազների համապատասխան վերապատաստումները, ովքեր սերտ համագործակցության եզրեր պետք է ունենան ապագա պրոբացիոն ծառայության հետ (մինչդատական գեկույցների տրամադրում, պատժի վերաբերյալ գեկույցների տրամադրում, մեղիացիա, գործի արտադատական լուծում և այլն):

Գործառնություններ

Պրոբացիոն գործառնությունները սկսվում են դատարանի կողմից համապատասխան որոշում կայացնելու պահից: Խորհրդակցելով տվյալ տարածքի պրոբացիոն աշխատակցի հետ՝ դատավորը հաստատում է պրոբացիոն աշխատանքների պլանը:

Պրոբացիան սկսելուց առաջ, դատապարտյալի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (կազմվում է պլան), որի մեջ մասնավորապես նշվում է.

- Պրոբացիայի պայմաններ
- Պատասխանատու պրոբացիոն աշխատակից
- Դատապարտյալի համաձայնությունն ուր հանցանք չկատարելու մասին
- Ինչ գործողություններ պետք է կատարի և ինչ ժամանակահատվածում:

Բացի վերը նշված պլանից և ամրագրված պրոբացիոն գործառնություններից՝ դատարանը կարող է դնել նաև լրացուցիչ պարտավորություններ անչափահասի և պրոբացիոն ծառայողի վրա: Պրոբացիայի ժամկետը և պայմանները որոշում է դատարանը՝ խորհրդակցելով պրոբացիոն աշխատակցի հետ:

Պրոբացիայի ժամանակահատվածում ոստիկանության որևէ գործառնության կամ ներգրավում բացառվում է:

Մինչ դատական և դատական զեկույցներ

Գերմանիայի Դաշնության ունում պրոբացիոն ծառայության կողմից զեկույցները ներկայացվում են ինչպես մինչ դատական վարույթում, այնպես էլ դատական փուլում:

Չեկույցները մինչ դատական փուլում կրում են տեղեկատվական բնույթ այն մասին, թե ինչպիսի խախտման միջոց կարող է ընտրել դատարանը դատապարտյալի նկատմամբ: Խախտման միջոցի ընտրության հարցում զեկույցների պատրաստումը պարտադիր բնույթ չի կրում: Այս առումով, պրոբացիոն աշխատակիցը ներկայացնում է նաև սոցիալական տեղեկատվական զեկույց (social enquiry report) պատժի կամ պրոբացիայի կատարման վերաբերյալ:

Դատական փուլում՝ մինչև պատժի վերաբերյալ որոշում կայացնելը, տրամադրվում է մինչ պատժային զեկույց (pre-sentence report): Այն հիմնականում ներառում է տեղեկություններ, թե ինչպիսի վարք է ցուցաբերել դատապարտյալը պրոբացիայի ընթացքում և ինչպիսի պատիժ կիրառել ամբաստանյալի նկատմամբ: Այս զեկույցները կրում են պարտադիր բնույթ:

Բոլոր զեկույցները տրամադրվում են միայն դատավորին:

Այլ ընտրանքային պատիժների կատարում և վերահսկողություն

Վերահսկողության ընթացքում անչափահասը պրոբացիոն ծառայողի մոտ ընդունելության է գալիս նվազագույնը ամիսը մեկ անգամ, հաճախ նաև՝ շաբաթական մեկ անգամ՝ կախված նրա վարքի վերահսկման հաճախականության անհրաժեշտությունից: Սա հանդիսանում է նաև պրոբացիայի ժամանակահատվածում անչափահասին ներկայացված պայմաններից մեկը, որը չի կարող գերազանցել 5 տարին: Որպես կանոն, պրոբացիայի (հատկապես անչափահասների) ժամանակահատվածը տևում է 2-3 տարի:

Անչափահասների գործերով պրոբացիոն աշխատակցի համար կա հստակ պարտականություն՝ աշխատել անչափահասի հետ (անչափահասների արդարադատության մասին օրենք): Նշված իրավական ակտով ամրագրված է նաև, որ անչափահասի վերահսկողության ժամանակ պրոբացիոն աշխատակիցը կարող է կցված լինել 3 տարի, իսկ մնացած 2 տարվա ընթացքում, անչափահասը, գտնվելով պրոբացիայի մեջ, կարող է չվերահսկվել պրոբացիոն աշխատակցի կողմից:

Պրոբացիոն աշխատակիցը վերահսկողության ընթացքում կատարում է նաև տնայցներ, և անհրաժեշտության դեպքում աշխատանքներ են իրականացվում նաև նրա ընտանիքի անդամների հետ:

Դատավորը պրոբացիայի ընթացքում կարող է երկարացնել կամ կրճատել պրոբացիայի ժամանակահատվածը, կարող է նաև այլ պարտավորություններ դնել: Նման որոշումների կայացումից առաջ նա քննարկում է պրոբացիոն ծառայողի հետ, հաշվի են առնվում պրոբացիոն ծառայողի կողմից պրոբանտի վերաբերյալ ներկայացված գեկույցները:

Եթե դատարանի կողմից պարտավորություններ են դրվում անչափահասի վրա, ապա այդ պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնում է պրոբացիոն ծառայողը: Այս առումով պրոբացիոն ծառայողի գործառույթները կրում են երկակի բնույթ. մի կողմից աջակցել, խրախուսել, մյուս կողմից՝ վերահսկել:

Պայմանական վաղաժամկետ ազատում

Պրոբացիայի ծառայողը գործունեի բանտերի հետ երկու դեպքում՝ դատապարտյալին կարճաժամկետ մեկնումների տրամադրման և պատժից պայմանական վաղաժամկետ ազատման:

Պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պրոբացիայի ծառայողը հանդիպում է անչափահասին բանտում: Ծանոթացնում է նրան իր իրավունքներին և պարտականություններին ազատումից հետո, երբ նշանակվի պրոբացիա: Քրեակատարողական հիմնարկ այցելելիս պրոբացիոն աշխատակիցերը գրուցում է հիմնարկի սոցիալական աշխատողի հետ ծանոթանալու անչափահասի սոցիալական պատմությանը և խնդիրներին: Բանտերում պրոբացիայի սոցիալական աշխատողը և հիմնարկի սոցիալական աշխատողը տարբեր գործառույթներ ունեն:

Եթե անչափահասը ինչ-որ կրթություն է ստանում բանտում, կամ մասնակցություն է ունենում վերականգնողական ծրագրերի, ապա դրանք շարունակվում են նաև պրոբացիայի ժամանակահատվածում: Պրոբացիայի ծառայողը որոշումների կայացման, այդ թվում՝ պայմանական վաղաժամկետ ազատման որոշման վերաբերյալ գնահատական կարծիք չի տալիս, ուղղակի պարզում է ազատվելուց հետո պրոբացիայի ժամանակահատվածում անհրաժեշտ անելիքները, եթե դրանք փոխկապված են նաև բանտի հետ, միաժամանակ բացահայտում է խնդիրները և փորձում լուծել դրանք (բնակություն վայր, աշխատանք և այլն): Պայմանական վաղաժամկետ ազատման հարցում դատավորը առաջնաերթություն է տալիս բանտի անձնակազմի եզրակացությունը:

Պայմանական վաղաժամկետ ազատումից առաջ, պրոբացիոն ծառայողը տեղեկանում է դատապարտյալի ազատվելու հնարավորության մասին մի քանի ամիս առաջ:

Գործընթացը սկսվում է բանտարկյալի՝ ազատման հետ կապված դիմումով: Այնուհետև ՔԿ հիմնարկի սոցիալական աշխատողը բանտարկյալի վերաբերյալ գրում է եզրակացություն: Այս

Եզրակացու թյան պատճենը կարող է ուղարկվել պրոբացիոն ծառայողին միայն այն դեպքում, եթե բանտարկյալը իր դիմումի մեջ այդ մասին տվել է իր համաձայնությունը:

Պրոբացիոն աշխատակցի հիմնական գործառույթը ազատման նախապատրաստվողին ազատվելուց հետո իր իրավունքների և պարտականությունների մասին իրազեկելն է, պատժի կրման ընթացքում նրա ցուցաբերած վարքի և ազգականների հետ հարաբերությունների մասին տեղեկանալը, որի արդյունքում ներկայացնում է նաև խորհրդատվական զեկույց անչափահասի՝ հասարակությունում հարմարման հնարավորությունների և ռիսկերի վերաբերյալ: Ստուգում է բանտի կողմից տրված ինֆորմացիան՝ հիմնականում հաշվի առնելով դատապարտյալի հետագա հնարավորություններն ու ռեսուրսները՝ թե ինչ կարող է անել նահետագայում, ինչպիսի հեռանկարներ ունի: Ըստ գործող պրակտիկայի՝ եթե դատապարտյալը ներկայացվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման և պետք է ազատվի, նրան տրամադրվում է կարճաժամկետ մեկնում մինչև 3 օր տևողությամբ: Սույն գործունեությամբ, ըստ էության, անչափահասը «փորձարկման» է ենթարկվում: Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հետագա հարցի քննարկման համար հիմք է հանդիսանում նաև կարճաժամկետ մեկնման ընթացքում դրսևորած վարքագիծը (ճիշտ ժամանակին ներկայանալը, սոցիալական դրական կապեր ստեղծելը կամ վերականգնելը, կրթական, աշխատանքային կամ այլ գործունեությամբ զբաղվելը և այլն):

Մեդիացիա

Պրոբացիոն ծառայությունն իրականացնում է նաև մեդիացիա, սակայն այս գործընթացն իրականացվում է դատական փուլում և որոշումներ ընդունում է ոչ թե դատախազը (արտադատական կարգով), այլ դատավորը՝ նաև անչափահասների գործերով: Ըստ էության նշված կարգ է սահմանված նաև ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Այս առումով, կարծում ենք մեդիացիան պետք է կիրառել հատկապես նախաքննության փուլում և գործն ավարտել (հաշտության դեպքում) դատախազական օղակում: Նման պարագայում մեդիացիան պետք է դիտարկել ոչ միայն որպես երկու կողմերի հաշտեցման գործառույթ, այլև հնարավորությունն տալ անչափահասին՝ հնարավորինս զերծ մնալ դատական գործառույթներից և դրանցից բխող լրացուցիչ լարվածությունից: Այս մասին են վկայում նաև ՄԱԿ-ի Պեկինյան կանոնները, անդամ պետություններին ուղղված՝ քրեական գործերով միջևորդության վերաբերյալ նախարարների կոմիտեի թիվ R (99) 19 առաջարկությունը, «Երեխաների իրավունքների իրականացման մասին» եվրոպական կոնվենցիան և այլ փաստաթղթեր:

Գերմանիայի Դաշնության ղեկավարները մեղիացիան, որպես կանոն, իրականացվում է տարբեր հասարակական, շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից, որոնց աշխատակիցներն ունեն մեղիատրի որակավորում:

Վերականգնողական ծրագրեր

Պրոբացիայի ծառայության կողմից անչափահասների հետ իրականացվում են հետևյալ վերականգնողական ծրագրերը.

- Ագրեսիվության նվազման թրենինգ
- Սթրեսի կառավարման թրենինգ
- Հակաթմրամոլային թրենինգ
- Մասնագիտական կրթության թրենինգ (համակարգիչ, հյուսնություն, մաթեմատիկա և այլն)
- Արձակուրդի կազմակերպում (հանգստի, էքսկուրսիաների կազմակերպում)
- Անբարենպաստ ընտանիք ունեցող, կամ՝ ընդհանրապես ընտանիք չունեցող դատապարտյալի ժամանակավոր կացարանով ապահովում:

Որպես կանոն, այս աշխատանքներն իրականացվում են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից՝ պատվիրակման կարգով, բացառությամբ ագրեսիվության նվազեցման թրենինգի, որի ուղղությամբ պրոբացիոն տարբեր աշխատակիցներ անցել են համապատասխան վերապատրաստում:

Հոգեբանական և նեղ մասնագիտական այլ աշխատանքները, որպես կանոն, պատվիրակվում են համապատասխան մասնագիտացված կառույցների:

Պատվիրակման համար հիմք է հանդիսանում ոչ միայն տվյալ կազմակերպության մասնագիտացումը, այլև անչափահասի դիմումը, համաձայնությանը այդ կազմակերպությունն հաճախելու համար: Երբ պրոբացիոն ծառայողը անչափահասին ուղղորդում է որոշակի հաստատության, քննարկում է նրա հետ հնարավոր խնդիրներն ու կոնֆլիկտները: Անչափահասին իրավունք է վերապահված դիմելու դատարան և ներկայացնելու պրոբացիայի ծառայողին այլ ծառայողով փոխելու պահանջ:

Հետագայում դատարանին անչափահասի վարքի վերաբերյալ զեկույցների կազմման համար հիմք է ընդունվում տվյալ կազմակերպությունների կողմից տրվող բնութագրերը և անչափահասի վերաբերյալ մանրամասն տեղեկանքները:

Նշված կազմակերպությունները ֆինանսավորվում են նաև պետական բյուջեից՝ սուբսիդարության սկզբունքի համակարգի միջոցով: